Այստեղ ρ ֆունկցիայի ընտրությունը բավական կամայական է, բայց մետրիկական տարածություններում կա դրա բնական թեկնածու՝ տրված $x_0 \in \mathcal{M}$ սկզբնակետից հեռավորությունը: Եթե $\mathcal{M} = \mathbb{R}^n$ and $d\mu(x) = \mu(x)dx$, որտեղ $\mu \in C^\infty(\mathbb{R}^n)$ -ն ողորկ դրական խտություն է, ապա գործ ունենք պարզապես բևեռային կոորդինատների անցման հետ.

$$\int_{\mathbb{R}^n} f(x) d\mu(x) = \int_0^\infty \int_{\mathcal{S}_r} f(r, \varphi) \omega(r, \varphi) d\varphi dr, \quad \forall f \in L^1_{loc}(\mathbb{R}^n),$$

$$\mathcal{S}_r \doteq \{x \in \mathbb{R}^n \mid |x| = r\}, \quad \omega(r, \varphi) = \frac{d\mu(x(r, \varphi))}{d\varphi dr}:$$

Ընդհանուր դեպքում դիցուք $\mathcal{M} = (\mathcal{M}, d)$ -ն մետրիկական տարածություն է, իսկ μ -ն՝ չափ \mathcal{M} -ի Σ Բորելի σ -հանրահաշվի վրա: Այս հողվածում բոլոր չափերը կհամարվեն դրական, $\mu(\cdot) \geq 0$, և σ -ադդիտիվ՝

$$(\forall \{A_k\}_{k=1}^\infty \subset \Sigma) \quad (\forall k, l \in \mathbb{N}) k \neq l \Rightarrow A_k \cap A_l = \emptyset \Rightarrow \mu\left(\bigcup_{k=1}^\infty A_k\right) = \sum_{k=1}^\infty \mu(A_k):$$

Այսպիսի ցանկացած չափ մենք կանվանենք Բորելի չափ՝ չնայած, որ որոշ աղբյուրներ պահանջում են, որ Բորելի չափերն ունենան լրացուցիչ հարմար հատկություններ: Ընտրենք $x_0 \in \mathcal{M}$ սկզբնակետ և $\rho_{x_0} \in C(\mathcal{M}, [0, R])$ -ով նշանակենք հետևյալ կերպ տրված ֆունկցիան.

$$\rho_{x_0}(x) = d(x, x_0), \quad \forall x \in \mathcal{M}: \tag{1}$$

Մենք այստեղ խոսելու ենք x_0 կենտրոնով և $r \in [0, R]$ շառավղով $\mathcal{S}_r(x_0)$ գնդաձևերի և $\mathcal{B}_r(x_0)$ գնդերի մասին.

$$\mathcal{S}_r(x_0) \doteq \rho_{x_0}^{-1}(\{r\}), \quad \mathcal{B}_r(x_0) \doteq \rho_{x_0}^{-1}([0, r]) = \bigcup_{0 \leq s < r} \mathcal{S}_s(x_0), \quad \forall r \in [0, R]:$$

Բորելի ν_{x_0} չափը $[0, R]$ -ի վրա սահմանված է այսպես՝

$$\nu_{x_0} \doteq \mu \circ \rho_{x_0}^{-1}, \tag{2}$$

և այդպիսով

$$\nu_{x_0}([0, r]) = \mu(\mathcal{B}_r(x_0)), \quad \forall r \in [0, R]:$$

Սահմանում 1 Կասենք, որ մետրիկական չափային (\mathcal{M}, d, μ) տարածությունը թույլատրում է $x_0 \in \mathcal{M}$ կետում բևեռային վերլուծություն, եթե գոյություն ունի \mathcal{M} -ի վրա Բորելի վերջավոր ω_r չափերի $r \mapsto \omega_r$ դաշտը ν_{x_0} -հա. $r \in [0, R]$ -ի համար այնպես, որ ցանկացած չափելի $f : \mathcal{M} \rightarrow \mathbb{C}$ ֆունկցիայի համար, որի

$$\int_{\mathcal{M}} f(x) d\mu(x)$$

ինտեգրալն իմաստալից է (վերջավոր կամ անվերջ), տեղի ունեն հետևյալ պայմանները.

1. Դետևյալ արտապատկերումը չափելի է ըստ Բորելի՝

$$[0, R) \ni r \mapsto \int_{\mathcal{M}} f(x) d\omega_r(x):$$

2. ν_{x_0} -հ.ա. $r \in [0, R)$ -ի համար ω_r չափը կենտրոնացած է $S_r(x_0)$ -ի վրա, այսինքն՝

$$\int_{\mathcal{M}} f(x) d\omega_r(x) = \int_{S_r(x_0)} f(x) d\omega_r(x):$$

3. Ունենք

$$\int_{\mathcal{M}} f(x) d\mu(x) = \int_{[0, R)} \int_{S_r(x_0)} f(x) d\omega_r(x) d\nu_{x_0}(r) :$$

Նկատառում 1 Եթե ν_{x_0} չափը $[0, R)$ -ի վրա բացարձակ անընդհատ է Լեբեգի չափի նկատմամբ, ապա գոյություն ունի ըստ Բորելի չափելի, ոչ բացասական, լոկալ ինտեգրելի $\dot{\nu}_{x_0}$ ֆունկցիա այնպես, որ $d\nu_{x_0}(r) = \dot{\nu}_{x_0}(r) dr$: Այդ դեպքում $\dot{\nu}_{x_0}$ արտադրիչը կարելի է ներառել ω_r չափերի մեջ այնպես, որ Սահմանում 1-ի մաս 3-ը դառնա

$$\int_{\mathcal{M}} f(x) d\mu(x) = \int_0^R \int_{S_r(x_0)} f(x) d\omega_r(x) dr:$$

Սա համապատասխանում է [RuVe19]-ում բևեռային վերլուծության (1.2) սահմանմանը. այս դեպքում այդ աշխատանքում կիրառված մասերով ինտեգրման մեթոդները կիրառելի են:

Չափերի տեսության տեսանկյունից բևեռային վերլուծությունն ընդամենը չափի ապահիտեգրման մի դեպք է, և այս հոդվածում մեր նպատակն է ուսումնասիրել մետրիկական տարածության մեջ այս տեսակի չափի ապահիտեգրման համար անհրաժեշտ պայմանները: Այն հարցը, թե արդյոք ν_{x_0} չափը բացարձակ անընդհատ է Լեբեգի չափի նկատմամբ, առնչություն չունի ապահիտեգրման հետ, այլ արտացոլում է \mathcal{M} -ի երկրաչափական տեսքն ու μ -ի բաշխումը:

2 Ենթադրությունների քննարկում

Գնդերի վերջավուն չափը: Սահմանում 1-ով տրված բևեռային վերլուծությունն օգտակար է, երբ պայման 3-ը բավարարված է ոչ տրիվիալ կերպով: Եկեք արտագրենք այն չափերի լեզվով՝

$$\mu(\cdot) = \int_{[0, R)} \int_{S_r(x_0)} \omega_r(\cdot) d\nu_{x_0}(r):$$

Եթե μ չափը վերջավոր է, ապա ամեն ինչ պարզ է, բայց բևեռային վերլուծության ներմուծման իմաստը հաճախ հենց անվերջ չափի հետ աշխատանքն է: Եթե μ չափը լոկալ վերջավոր չէ, ապա անխուսափելիորեն $C(\mathcal{M}) \not\subset L^1_{loc}(\mathcal{M}, \mu)$, և անհրաժեշտ է դառնում աշխատել չափելի ֆունկցիաների շատ աղքատ բազմությունների հետ: Կարելի է ասել, որ այդպիսի չափերը չունեն լայն կիրառություն ֆունկցիոնալ անալիզում, և ենթադրելով μ չափը լոկալ վերջավոր՝ ընդհանրության լուրջ խախտում տեղի չի ունենում:

Երբ μ -ն լոկալ վերջավոր է x_0 -ում, դիցուք

$$R_* \doteq \inf \{r \in [0, R) \mid \mu(\mathcal{B}_r(x_0)) = +\infty\} \in (0, +\infty], \quad (3)$$

պայմանով, որ $\inf \emptyset = R$: Եթե $R_* < R$, ապա ամեն չափելի A բազմության համար, որն ունի $\rho_{x_0}(A) \subset [R_*, R)$ պայմանը, ստանում ենք $\mu(A) = +\infty$, որն անօգուտ է դարձնում Սահմանում 1-ի 3. բանաձևը $r \geq R_*$ տիրություն: Ինչ վերաբերում է տրված x_0 կետի շուրջ բևեռային վերլուծությանը, կարելի է \mathcal{M} -ի փոխարեն դիտարկել $\mathcal{M}' \doteq \mathcal{B}_{R_*}(x_0)$ ենթատարածությունը և դնել $R \doteq R_*$: Այս կերպ $r \in [0, R)$ շառավղով բոլոր $\mathcal{B}_r(x_0)$ գնդերը կունենան վերջավոր չափ: Մասնավորապես μ չափը կլինի լոկալ վերջավոր \mathcal{M} -ի վրա:

(\mathcal{M}, d) -ի սեպարաբելությունն ու լրիվությունը: Մետրիկական (\mathcal{M}, d) տարածության, և այդպիսով՝ նաև իր Բորելի σ -հանրահաշվի և իր վրա բոլոր Լեբեգի տարածությունների սեպարաբելությունը անչափ կարևոր է ֆունկցիոնալ անալիտիկ արդյունքների մեծ մասի համար: Ուստի լուրջ սահմանափակում չի լինի ենթադրել, որ (\mathcal{M}, d) -ն սեպարաբել է: Սակայն ստորև մենք կտեսնենք Թեորեմ 2-ում, որ բևեռային վերլուծություն կարելի է ստանալ նույնիսկ առանց սեպարաբելության, եթե պատրաստ ենք լրիվության և այլ պայմաններ դնել μ -ի վրա:

Եթե մետրիկական (\mathcal{M}, d) տարածությունը լրիվ չէ, ապա փակ գնդերը կարող են կոմպակտ չլինել և ունենալ անվերջ չափ, նույնիսկ երբ μ -ն լոկալ վերջավոր է, իսկ \mathcal{M} -ը՝ լոկալ կոմպակտ: Իրոք, այդպիսին է $\mathcal{M} = (0, 1)$ -ն եվկլիդյան մետրիկայով և $d\mu(x) = dx/x$ չափով: \mathcal{M} -ի լրիվության ենթադրությունը կանխում է լոկալ վերջավոր Բորելի չափերի հնարավոր արտասովոր վարքը: Թերևս մեր հիմնական արդյունքները՝ Թեորեմ 1-ն ու Թեորեմ 2-ը, հիմնված չեն (\mathcal{M}, d) -ի լրիվության ենթադրության վրա:

Մյուս կողմից, եթե հաշտվում ենք սեպարաբելության և լրիվության սահմանափակումների հետ, ապա հայտնվում ենք լեհական (Polish) մետրիկական (\mathcal{M}, d) տարածությունների տիրույթում: Լեհական մետրիկական տարածությունների վրա Բորելի չափերը շատ հնազանդ են և տեխնիկապես շատ հարմար:

\mathcal{M} -ի σ -կոմպակտությունը: Այս խորագրի ներքո կներկայացնենք երկու տեխնիկական պնդումներ, որոնք կարելի է համարել մեկը մյուսի մասնակի հակադարձը: Միասին վերցրած՝ դրանք հուշում են, որ \mathcal{M} -ի σ -կոմպակտությունը շատ հեռու չէ բևեռային վերլուծությունների համար ճիշտ համատեքստը լինելուց՝ չնայած, որ այն խիստ անհրաժեշտ չէ: Հիշենք, որ տոպոլոգիական տարածությունը կոչվում է σ -կոմպակտ, եթե այն հաշվելի հատ կոմպակտ ենթատարածությունների միավորումն է:

Նախ ցույց տանք, որ եթե համաձայն ենք մետրիկական (\mathcal{M}, d) տարածությունը համարել լեհական, ապա կարող ենք փոխարենը (\mathcal{M}, d) -ը համարել σ -կոմպակտ:

Պնդում 1 *Լեհական տարածության վրա ամեն լոկալ վերջավոր Բորելի չափ կենտրոնացած է σ -կոմպակտ ենթատարածության վրա, որը որոշ հաշվելի, չհատվող կոմպակտ բազմությունների ընտանիքների լոկալ վերջավոր հաշվելի միավորումն է:*

Ապացույց: Դիցուք \mathcal{M} -ը լեհական տարածություն է, իսկ μ -ն՝ լոկալ վերջավոր Բորելի չափ: Դիցուք $\{U_x\}_{x \in \mathcal{M}}$ -ը բաց բազմությունների այնպիսի ընտանիք է, որ $\forall x \in \mathcal{M}$ -ի համար $\mu(U_x) < \infty$ ՝ ելնելով μ -ի լոկալ վերջավոր հատկությունից: Որպես մետրիզացվող տարածություն՝ \mathcal{M} -ը պարակոմպակտ է [Sto48], ուստի գոյություն ունի $\{U_x\}_{x \in \mathcal{M}}$ -ի լոկալ վերջավոր բարելավում՝ $\{V_\alpha\}_{\alpha \in A}$: Բայց \mathcal{M} -ը նաև երկրորդ հաշվելի է (second countable) և այդպիսով՝ Լինդելոֆի, ուստի $\{V_\alpha\}_{\alpha \in A}$ -ն ունի հաշվելի, լոկալ վերջավոր ենթաձածկ՝ $\{V_k\}_{k=1}^\infty$:

Ընտրենք $k \in \mathbb{N}$: Պարզ է, որ $\exists x \in \mathcal{M}$ այնպիսին, որ $V_k \subset U_x$, և այդպիսով $\mu(V_k) \leq \mu(U_x) < \infty$: Որպես Սուլիխի \mathcal{M} տարածության բաց ենթաբազմություն՝ V_k -ն ինքը Սուլիխի տարածություն է (Լեմմա 6.6.5, [Bogoy.II]), և μ -ի սահմանափակումը V_k -ի վրա Բորելի վերջավոր չափ է: Ըստ [Bogoy.II]-ի Թեորեմ 7.4.3-ի՝ μ -ն պիրկ (tight) է V_k -ի վրա, այսինքն՝

$$(\forall \epsilon > 0)(\exists K_\epsilon \in V_k \text{ կոմպակտ}) \mu(V_k \setminus K_\epsilon) < \epsilon :$$

Դիցուք $X_1 \doteq V_k$, իսկ կոմպակտ $K_1 \in X_1$ ընտրված է ըստ վերը գրվածի, և $\mu(X_1 \setminus K_1) < 1$: Ապա $X_2 \doteq X_1 \setminus K_1$ -ը Սուլիխի տարածության բաց ենթաբազմություն է, ուստի՝ Սուլիխի տարածություն, և μ -ն, սահմանափակված X_2 -ի վրա, տալիս է Բորելի վերջավոր չափ, որը կրկին պիրկ է՝ ըստ նույն թեորեմի: Ինդուկտիվ շարունակելով այս գործընթացը՝ $n \in \mathbb{N}$ -րդ քայլում ընտրում ենք կոմպակտ $K_n \in X_n$ այնպես, որ $\mu(X_n \setminus K_n) < \frac{1}{n}$: Նշանակենք

$$Y_k \doteq \bigcup_{n=1}^{\infty} K_n \subset X:$$

Ուրեմն

$$\mu(V_k \setminus Y_k) \leq \mu\left(V_k \setminus \bigcup_{n=1}^N K_n\right) = \mu(X_N \setminus K_N) < \frac{1}{N}, \quad \forall N \in \mathbb{N},$$

ինչը ցույց է տալիս, որ $\mu(V_k \setminus Y_k) = 0$:

Այժմ նշանակենք

$$Y \doteq \bigcup_{k=1}^{\infty} Y_k \subset \mathcal{M}:$$

Այսպիսով

$$\begin{aligned} \mu(Y^c) &= \mu\left(\bigcap_{\ell=1}^{\infty} Y_\ell^c\right) = \mu\left(\bigcup_{k=1}^{\infty} \left[V_k \cap \bigcap_{\ell=1}^{\infty} Y_\ell^c\right]\right) \leq \\ &= \mu\left(\bigcup_{k=1}^{\infty} V_k \cap Y_k^c\right) = \mu\left(\bigcup_{\ell=1}^{\infty} (V_\ell \setminus Y_\ell)\right) \leq \sum_{k=1}^{\infty} \mu(V_k \setminus Y_k) = 0, \end{aligned}$$

ինչը ցույց է տալիս, որ μ -ն կենտրոնացած է Y -ի վրա. Քանի որ $\{V_k\}_{k=1}^{\infty}$ ծածկը լոկալ վերջավոր է, պնդումն ապացուցված է: \square

Նկատառում 2 Վերոնշյալ Պնդում 1-ը, կարելի էր կարծել, թե ցույց է տալիս, որ լոկալ վերջավոր Բորելի չափը լեհական տարածության վրա կենտրոնացած է լոկալ կոմպակտ ենթատարածության վրա. եթե հաշվելի հատ չհատվող կոմպակտ բազմությունների միավորումը միշտ լիներ լոկալ կոմպակտ բազմության ենթաբազմություն, այդպիսի միավորումների լոկալ վերջավոր միավորումը նույնպես կլիներ լոկալ կոմպակտ բազմության ենթաբազմություն: Բայց դա իրոք այպես չէ, և մենք դա կցուցադրենք մի պարզ օրինակով:

Օրինակ 1 Դիցուք $\mathcal{M} = l^2(\mathbb{R})$, և $\gamma : l_c^2(\mathbb{Q}) \rightarrow \mathbb{N}$ -ով նշանակենք վերջավոր կրիչով (support) ուսցիոնալ հաջորդականությունների՝ հաշվելի և խիտ $l_c^2(\mathbb{Q}) \subset l^2(\mathbb{R})$ ենթաբազմության որևէ համարակալում: Ցանկացած $U \subset l^2(\mathbb{R})$ Բորելի ենթաբազմության համար նշանակենք

$$\mu(U) \doteq \sum_{x \in U \cap l_c^2(\mathbb{Q})} \frac{1}{\gamma(x)^2}:$$

Այսպես սահմանվում է Բորելի վերջավոր μ չափը լեհական $l^2(\mathbb{R})$ տարածության վրա, որն իրոք կենտրոնացած է կոմպակտ (միակետ) բազմությունների հաշվելի միավորման՝ $l_c^2(\mathbb{Q})$ -ի վրա: Բայց գոյություն չունի Y լոկալ

կոմպակտ ենթատարածություն այնպիսին, որ $l_c^2(\mathbb{Q}) \subset Y \subset l^2(\mathbb{R})$: Հիրավի, եթե այդպիսի տարածություն գոյություն ունենար, ապա 0 կետը կունենար մի կոմպակտ շրջակայք՝ $K \in Y$: Այդ դեպքում նաև $K \in l^2(\mathbb{R})$, ուստի նաև $\overline{K}^{l^2} = K$: Բայց $\exists \epsilon > 0$ այնպիսին, որ $\mathcal{B}_\epsilon(0) \cap l_c^2(\mathbb{Q}) \subset K$, և այդպիսով

$$\overline{\mathcal{B}_\epsilon(0) \cap l_c^2(\mathbb{Q})}^{l^2} = \overline{\mathcal{B}_\epsilon(0)} \subset \overline{K}^{l^2} = K,$$

ինչը հակասություն է, քանի որ $l^2(\mathbb{R})$ -ում փակ գնդերը կոմպակտ չեն:

Ստորև բերենք նույն բնույթի մի փոքր ավելի բարդ օրինակ:

Օրինակ 2 Դիցուք $\mathcal{M} = l^2(\mathbb{R})$, և նշանակենք

$$\mathcal{M} = \bigcup_{k=1}^{\infty} \mathcal{M}_k, \quad \mathcal{M}_k \doteq \{x \in l^2(\mathbb{R}) \mid k-1 \leq \|x\|_2 < k\}, \quad \forall k \in \mathbb{N}:$$

Ամեն $k \in \mathbb{N}$ -ի համար $\gamma_k : l_c^2(\mathbb{Q}) \cap \mathcal{M}_k \rightarrow \mathbb{N}$ -ով նշանակենք կետերի որևէ համարակալում: Ընտրենք որևէ ոչ բացասական $\{a_k\}_{k=1}^{\infty} \in [0, +\infty)^{\mathbb{N}}$ հաջորդականություն: Ամեն Բորելի $U \subset l^2(\mathbb{R})$ ենթաբազմության համար նշանակենք

$$\mu(U) \doteq \sum_{x \in U \cap l^2(\mathbb{Q})} m(x), \quad m(x) \doteq \frac{a_k}{\gamma_k(x)^2}, \quad \forall x \in l^2(\mathbb{Q}) \cap \mathcal{M}_k, \quad \forall k \in \mathbb{N}:$$

Այսպիսով μ -ն Բորելի չափ է $l^2(\mathbb{R})$ -ի վրա, որը վերջավոր է կամ անվերջ՝ կախված նրանից, թե արդյոք $\sum_k a_k$ -ն զուգամիտում է, թե ոչ: Լինի μ -ն վերջավոր, թե անվերջ, բոլոր գնդերի չափերը բավարարում են $0 < \mu(\mathcal{B}_\epsilon(x)) < \infty$ պայմանին, $\forall x \in l^2(\mathbb{R}), \forall \epsilon > 0$: Ինչպես և առաջին օրինակում, μ -ն կենտրոնացած է $l_c^2(\mathbb{Q})$ -ի վրա, որը որևէ լոկալ կոմպակտ ենթատարածության ենթաբազմություն չէ:

Մյուս կողմից՝ Թեորեմ 1-ի հիմնական ենթադրությունները՝ \mathcal{M} -ի սեպարաբելությունն ու μ -ի պրկությունը, ստացվում են միանգամից, եթե \mathcal{M} -ը ենթադրում ենք σ -կոմպակտ:

Լեմմա 1 Եթե \mathcal{M} -ը σ -կոմպակտ է, ապա այն սեպարաբել է, և ամեն կիսավերջավոր (տես Սահմանում 211F [Fre01]) Բորելի չափ նրա վրա պիրկ է (նույնիսկը՝ ներքին ռեզուլյար):

Ապացույց: Դիցուք $\mathcal{M} = \bigcup_{n=1}^{\infty} K_n$, որտեղ $K_n \in \mathcal{M}$ -ը կոմպակտ է բոլոր $n \in \mathbb{N}$ -երի համար: Ամեն K_n -ը կոմպակտ մետրիկական, ուստի և լեհական տարածություն է: Այդպիսով \mathcal{M} -ի սեպարաբելությունն ակնհայտ է: Եթե նշանակենք

$$f \doteq \bigoplus_{n=1}^{\infty} \text{id}_{K_n}, \quad f : \bigoplus_{n=1}^{\infty} K_n \rightarrow \mathcal{M},$$

ապա f -ն անընդհատ է: Հաշվելի հատ լեհական տարածությունների ուղիղ գումարը լեհական է, ուստի \mathcal{M} -ը Սուսլինի տարածություն է: Ըստ [Fre03]-ի Թեորեմ 423E-ի՝ \mathcal{M} -ում բոլոր բաց բազմությունները K -անալիտիկ են, ուստի, ըստ [Fre03]-ի Պնդում 432C-ի, μ -ն պիրկ է: \square

Նկատառում 3 Համարենք, որ բոլոր գնդերի վերջավոր չափը (և այդպիսով μ -ի լոկալ վերջավոր լինելը) ապահովված է: Այդ դեպքում \mathcal{M} տարածության σ -կոմպակտությունը երաշխավորում է բևեռային վերլուծության գոյությունը Լեմմա 1-ի և Թեորեմ 1-ի օգնությամբ: Մյուս կողմից, եթե \mathcal{M} -ը սեպարաբել է ու լրիվ, ապա Պնդում 1-ի օգնությամբ մենք կարող ենք \mathcal{M} -ի փոխարեն վերցնել լրիվ μ -չափ ունեցող σ -կոմպակտ ենթատարածություն:

3 Բևեռային վերլուծության գոյությունը

Ինչպես նշվեց վերը, բևեռային վերլուծությունը չափի ապահիտեգրման մասնավոր դեպք է: Մեզ հայտնի են չափի ապահիտեգրման առնվազն երկու բավարար մանրամասն նկարագրություններ. [Bog07.II]-ը՝ Բոգաչովի հեղինակությամբ, և [Fre03]-ը՝ Ֆրեմլիխի: [Bog07.II]-ի Թեորեմ 10.4.8-ն ու Յետևանք 10.4.10-ն ունեն այն առավելությունը, որ փոքր-ինչ ավելի ուժեղ արդյունք են տալիս՝ ռեգուլյար պայմանական չափ, ոչ թե պարզապես ապահիտեգրում, և գործում են նաև նշանափող չափերի համար: Այս աշխատանքի թերությունը հեղինակի հակումն է դեպի զուտ վերջավոր չափեր, որը նա խաղաղությամբ խոստովանում է առաջին հատորի ներածականում [Bog07.I]: Փոխարենը՝ Ֆրեմլիխի բաժին 452-ը [Fre03]-ում տրամադրում է դրական σ -վերջավոր չափերի ապահիտեգրում, ինչը բավարար է մեր նպատակների համար: Այլապես թեմային այս երկու անդրադարձները համեմատելի են:

Այս ակնարկի գլխավոր արդյունքը հետևյալ գոյության թեորեմն է:

Թեորեմ 1 *Դիցուք (\mathcal{M}, d) -ն սեպարաբել մետրիկական տարածություն է, և $x_0 \in \mathcal{M}$: Դիցուք μ -ն այնպիսի Բորելի չափ է (\mathcal{M}, Σ) -ի վրա, որ.*

1. *μ -ն ներքին ռեգուլյար է՝ (այսինքն՝ պիրկ), ասել է, թե*

$$(\forall A \in \Sigma) (\forall \epsilon > 0) (\exists K_\epsilon \subset A) \quad K_\epsilon \text{ կոմպակտ} \quad \wedge \quad \mu(A \setminus K_\epsilon) < \epsilon:$$

2. *Կամայական $r \in [0, R)$ շառավղով՝ գնդերն ունեն վերջավոր չափ՝ $\mu(\mathcal{B}_r(x_0)) < \infty$:*

Այս պարագայում գոյություն ունի μ -ի բևեռային վերլուծություն \mathcal{M} -ում x_0 -ի շուրջ:

Ապացույց: Չիշենք (i)-ում սահմանված $\rho_{x_0} \in C(\mathcal{M}, [0, R))$ ֆունկցիան ու $\nu_{x_0} = \mu \circ \rho_{x_0}^{-1}$ Բորելի չափը $[0, R)$ -ի վրա, և նկատենք, որ $\rho_{x_0} : (\mathcal{M}, \mu) \rightarrow ([0, R), \nu_{x_0})$ -ն հակադարձ չափապահպան (inverse-measure-preserving) արտապատկերում է՝ ըստ [Fre03]-ի Սահմանում 235G-ի: Քանի որ $[0, R)$ -ը Լինդելոֆի է, ν_{x_0} -ն σ -վերջավոր է այն և միայն այն դեպքում, երբ այն լոկալ վերջավոր է, իսկ դա երաշխավորված է $\nu_{x_0}([0, r)) = \mu(\mathcal{B}_r(x_0)) < \infty$ պայմանով $\forall r > 0$ -ի համար: \mathcal{M} -ի Բորելի σ -հանրահաշվի հաշվելի ծնունդը հետևում է \mathcal{M} -ի սեպարաբելությունից: Այժմ [Fre03]-ի Վարժություն 452X(i)-ից հետևում է, որ գոյություն ունի μ -ի ապահիտեգրում ν_{x_0} -ի նկատմամբ՝ $\{\omega_r\}_{r \in [0, R)}$, որը համատեղելի է ρ_{x_0} -ի հետ և էապես միակն է: $\forall r \in [0, R)$ -ի համար ω_r օբյեկտը Բորելի հավանականային չափ է \mathcal{M} -ի վրա: Քանի որ $[0, R)$ -ը հաշվելիորեն տարանջատված է (countably separated, տես Լեմմա 343E, [Fre02]), ըստ [Fre03]-ի Պնդում 452G(c)-ի՝ $\{\omega_r\}_{r \in [0, R)}$ ապահիտեգրումը խիստ համատեղելի է ρ_{x_0} -ի հետ (տես Սահմանում 452E, [Fre03]): Այսպիսով յուրաքանչյուր ω_r կենտրոնացած է $\rho_{x_0}^{-1}(\{r\}) = \mathcal{S}_r(x_0)$ -ի վրա: Ըստ [Fre03]-ի Պնդում 452F-ի՝ ամեն չափելի $f : \mathcal{M} \rightarrow \mathbb{C}$ -ի համար, որի $\int_{\mathcal{M}} f(x) d\mu(x)$ -ը իմաստալից է, ունենք

$$\int_{\mathcal{M}} f(x) d\mu(x) = \int_{[0, R)} \int_{\mathcal{S}_r(x_0)} f(x) d\omega_r(x) d\nu_{x_0}(r):$$

Այսպիսով բևեռային վերլուծության գոյությունը հաստատված է: \square

¹Իրականում ենթադրություն 1-ը կարող է թուլացվել այնպես, որ μ -ն լինի հաշվելի կոմպակտ [Fre03]-ի Սահմանում 451B-ի եզրաբանությամբ, կամ ունենա կոմպակտ մոտարկող դաս ինչպես [Bog07.II]-ի Սահմանում 1.4.6-ում:

²Տես բանաձև (3)-ի շուրջ քննարկումը R սահմանի խնայողական ընտրության մասին:

Յետևանք 1 Դիցուք (\mathcal{M}, d) -ն σ -կոմպակտ մետրիկական տարածություն է, և $x_0 \in \mathcal{M}$: Դիցուք μ -ն այնպիսի Բորելի չափ է \mathcal{M} -ի վրա, որ x_0 կենտրոնով բոլոր բաց գնդերն ունեն վերջավոր μ -չափ: Այդ դեպքում գոյություն ունի μ -ի բևեռային վերլուծություն \mathcal{M} -ում x_0 -ի շուրջ:

Ապացույց: Քանի որ բոլոր $\mathcal{B}_r(x_0)$ բաց գնդերը վերջավոր չափ ունեն, μ -ն լոկալ վերջավոր է, և այդպիսով նաև՝ կիսավերջավոր: Ըստ Լեմմա 1-ի՝ \mathcal{M} -ը սեպարաբել է, իսկ μ -ն՝ պիրկ: Մտում է միայն կիրառել Թեորեմ 1-ը: \square

Մետրիկական տարածության համար սեպարաբելությունը, երկրորդ հաշվելիությունն ու Լինդելոֆի հատկությունը փոխադարձ համարժեք են: Ստորև ներկայացնում ենք վերը տրված թեորեմի մի տարբերակ, որը չի պահանջում \mathcal{M} -ի սեպարաբելությունը, բայց փոխարենն ավելի խիստ պայմաններ է դնում μ չափի վրա: Նկատենք, որ կա անհամապատասխանություն մի կողմից [Freoz]-ում Ռադոնի չափային տարածության սահմանման, իսկ մյուս կողմից ստանդարտ գրականության մեջ Ռադոնի չափի սահմանման միջև: Սովորաբար Ռադոնի չափ համարվում է լոկալ վերջավոր և ներքին ռեգուլյար (պիրկ) Բորելի չափը: Բայց Ֆրեմլինը Ռադոնի չափային տարածություն է անվանում այն, ինչ մնացյալ գրականության մեջ կկոչվեր լոկալ որոշյալ Բորելի չափային տարածություն լրիվ Ռադոնի չափով (տես Սահմանում 41H(b), [Freoz]):

Թեորեմ 2 Դիցուք (\mathcal{M}, d) -ն մետրիկական տարածություն է, և $x_0 \in \mathcal{M}$: Դիցուք μ -ն այնպիսի Բորելի չափ է (\mathcal{M}, Σ) -ի վրա, որ.

1. $(\mathcal{M}, \Sigma, \mu)$ -ն Ռադոնի չափային տարածություն է [Freoz]-ի Սահմանում 41H(b)-ի իմաստով:
2. Կամայական $r \in [0, R)$ շառավղով գնդերն ունեն վերջավոր չափ՝ $\mu(\mathcal{B}_r(x_0)) < \infty$:

Այս պարագայում գոյություն ունի μ -ի բևեռային վերլուծություն \mathcal{M} -ում x_0 -ի շուրջ:

Ապացույց: Քանի որ ν_{x_0} չափը կրկին σ -վերջավոր է, ըստ [Freoz]-ի Թեորեմ 21L(c)-ի՝ այն խիստ տեղայնացվող է (strictly localizable): Ըստ [Freoz]-ի Պնդում 452O-ի՝ գոյություն ունի μ -ի ապահինտեգրում ν_{x_0} -ի նկատմամբ՝ $\{\omega_r\}_{r \in [0, R)}$, որը համատեղելի է ρ_{x_0} -ի հետ, և յուրաքանչյուր (\mathcal{M}, ω_r) Ռադոնի վերջավոր չափային տարածություն է: Մնացյալը՝ նախորդ թեորեմի համանմանությամբ: \square

Նկատառում 4 Նկատենք, որ Թեորեմ 2-ը տրամադրում է բևեռային վերլուծություն, որտեղ $(\mathcal{S}_r(x_0), \omega_r)$ -ը Ռադոնի վերջավոր չափային տարածություն է՝ ըստ [Freoz]-ի Սահմանում 41H(b)-ի:

4 ν_{x_0} չափի բացարձակ անընդհատությունը

Սահմանում 2-ում ν_{x_0} չափի՝ Լեբեգի չափի նկատմամբ բացարձակ անընդհատության խնդրի բնույթը հասկանալու համար այստեղ դիտարկենք շատ պարզ օրինակներ: ν_{x_0} չափն արտացոլում է μ չափը՝ բաշխված ըստ $\mathcal{S}_r(x_0)$ գնդաձևների, և նրա վարքը կախված է μ չափի համասեռությունից, ինչպես նաև տարբեր $\mathcal{S}_r(x_0)$ գնդաձևների համեմատելիությունից: Եթե μ -ն բավարար համասեռ է (որևիցե իմաստով), ապա ոչ բացարձակ անընդհատ ν_{x_0} կարող է առաջանալ անհամեմատելի գնդաձևներով անկանոն շերտավորման պատճառով (կրկին, որևիցե իմաստով): Գարթության վրա դիցուք \mathcal{M} -ը հորիզոնական առանցքի վրա $[0, a] \times \{0\}$ հատվածի և $(0, 0)$ կենտրոնով միավոր շրջանի որևէ աղեղի միավորումն է, իսկ $x_0 = (0, 0)$: Ենթադրենք μ -ն Լեբեգի չափն է \mathcal{M} -ի վրա, որը չափում է կորի երկարությունը սովորական կերպով: Այստեղ ν_{x_0} չափը ունի եզակի (singular) մաս՝ կենտրոնացած $r = 1$ կետում: Մյուս կողմից՝ ցանկացած այլ $x_0 \in \mathcal{M}$ կետի համար ν_{x_0}

կլիներ բացարձակ անընդհատ: Ավելացնելով տարբեր շրջանների աղեղներ՝ կարող ենք առաջացնել ավելի շատ, անվերջ քանակի $x_0 \in [0, a]$ կետեր, որոնց ν_{x_0} չափերը եզակի են:

Միաժամանակ, եթե μ չափը բավարար համասեռ չէ, ապա եզակի ν_{x_0} կարող է առաջանալ նույնիկ կատարյալ տեսքով մետրիկական \mathcal{M} տարածությունում: Կարելի է վերցնել որպես \mathcal{M} ցանկացած սովորական ողորկ երկրաչափական մարմին Էվկլիդյան հեռավորությամբ, օրինակ՝ $[0, 1]$ միավոր հատվածը, իսկ μ -ին թույլ տալ ունենալ ընդամենը մեկ կետային զանգված: Այդ դեպքում ինչպես էլ ընտրենք $x_0 \in [0, 1]$ կետը, ν_{x_0} չափը չի լինի բացարձակ անընդհատ: Ծայրահեղ օրինակ է Կանտորի μ չափը՝ Կանտորի ֆունկցիայով $[0, 1]$ -ի վրա տրվող Բորելի չափը, որը եզակի է ամենուրեք $[0, 1]$ -ի վրա [Fol99]: Այս դեպքում նույնպես ν_{x_0} -ն մաքուր եզակի է բոլոր $x_0 \in [0, 1]$ -ների համար:

Պայմանները (\mathcal{M}, d, μ) -ի և $x_0 \in \mathcal{M}$ -ի վրա, որոնց դեպքում ν_{x_0} -ն բացարձակ անընդհատ է, նուրբ խնդիր են ներկայացնում, որը պետք է առանձին ուսումնասիրել: Թերևս կարելի է նկատել, որ μ -ի անհամասեռությունից բխող խնդիրները շատ ավելի բարդ են, քան \mathcal{M} -ի ձևից կախված խնդիրները:

5 Ռիմանյան բազմաձևություններ

Եկեք նախ դիտարկենք Ռիմանյան բազմաձևության մեջ բաց գնդերի վերջավոր չափի խնդիրը:

Նկատառում 5 Դիցուք (\mathcal{M}, g) -ն ողորկ, կապակցված Ռիմանյան բազմաձևություն է իր գեոդեզիական d_g հեռավորությամբ և Ռիմանյան v_g ծավալով: Յուրաքանչյուր $\mathcal{B}_r(x_0)$ գնդի համար, եթե Ռիչիի կորությունը ներքևից սահմանափակ է $\mathcal{B}_r(x_0)$ -ի վրա, ապա գնդի Ռիմանյան ծավալը վերջավոր է՝ $v_g(\mathcal{B}_r(x_0)) < \infty$:

Այս պնդումն անմիջապես հետևում է Գրոմով-Բիշոփ-Գյունթերի համեմատության թեորեմից, տես [Gro04]-ի Թեորեմ 8.45-ը:

Նկատենք, որ կապակցված բազմաձևության σ -կոմպակտությունն ակնհայտ է, ուստի Յետևանք 1-ը կիրառելի է այնպիսի Ռիմանյան բազմաձևությունների համար, որոնց Ռիչիի կորությունը ներքևից սահմանափակ է գնդերի վրա, և Բորելի այնպիսի μ չափերի համար, որոնք ունեն սահմանափակ Ռադոն-Նիկոդիմի ածանցյալ Ռիմանյան ծավալի նկատմամբ: Այս վերջին պայմանը երաշխավորում է բաց գնդերի վերջավոր μ -չափը, իսկ դրանց v_g -չափն արդեն իսկ վերջավոր է ըստ վերոնշյալ նկատառման:

Այժմ անդրադառնանք ν_{x_0} չափի բացարձակ անընդհատությանը:

Պնդում 2 Դիցուք (\mathcal{M}, g) -ն ողորկ, կապակցված Ռիմանյան բազմաձևություն է իր գեոդեզիական d_g հեռավորությամբ և Ռիմանյան v_g ծավալով: Ենթադրենք, որ Ռիչիի կորությունը ներքևից սահմանափակ է ամեն $\mathcal{B}_r(x_0)$ գնդի վրա: \mathcal{M} -ի վրա Բորելի յուրաքանչյուր μ չափի համար, որը բացարձակ անընդհատ է v_g -ի նկատմամբ, և ամեն x_0 կետի համար, ν_{x_0} չափը բացարձակ անընդհատ է:

Ապացույց: Բավարար է պնդումն ապացուցել $\mu = v_g$ -ի համար: Ընտրենք $x_0 \in \mathcal{M}$ և $a \in (0, R)$, որտեղ R -ն՝ ինչպես (3)-ում: Զանի որ Ռիչիի կորությունը ներքևից սահմանափակ է $\mathcal{B}_a(x_0)$ -ի վրա, ըստ Գրոմով-Բիշոփ-Գյունթերի թեորեմի ([Gro04]-ի Թեորեմ 8.45) գոյություն ունի $c_a > 0$ այնպիսին, որ

$$1 \geq \frac{\mu(\mathcal{B}_r(x_0))}{c_a r^n} \geq \frac{\mu(\mathcal{B}_s(x_0))}{c_a s^n}, \quad n \doteq \dim \mathcal{M},$$

բոլոր $0 \leq r \leq s \leq a$ -ի համար: Այսպիսով՝

$$0 \leq \mu(\overline{\mathcal{B}_s(x_0)}) - \mu(\overline{\mathcal{B}_r(x_0)}) \leq \frac{\mu(\overline{\mathcal{B}_r(x_0)})}{r^n} (s^n - r^n) \leq n c_a a^{n-1} (s - r),$$

ինչը ցույց է տալիս, որ

$$r \mapsto \mu(\overline{\mathcal{B}_r(x_0)}) = \nu_{x_0}([0, r]) \quad (4)$$

ֆունկցիան Լիփշիցյան է, ուստի՝ բացարձակ անընդհատ ցանկացած կոմպակտ $[0, b] \subset [0, a]$ միջակայքում: Քանի որ սա ճշմարիտ է ցանկացած $a \in (0, R)$ -ի համար, ստանում ենք, որ (4) ֆունկցիան բացարձակ անընդհատ է յուրաքանչյուր կոմպակտ $[0, b] \subset [0, R]$ միջակայքում: Չետևաբար, ըստ Լեբեգի ինտեգրալ հաշվի հիմնարար թեորեմի, ν_{x_0} չափը բացարձակ անընդհատ է: \square

Բավականին համանման փաստարկ կիրառվել է [Skr19]-ի Պնդում 2.1-ում: Շնորհակալություն Կարեն Չովհաննիսյանին այդ հոդվածը մեր ուշադրությանը ներկայացնելու համար:

Չետևանք 2 *Դիցուք (\mathcal{M}, g) -ն ողորկ, կապակցված Ռիմանյան բազմաձևություն է իր գեոդեզիական d_g հեռավորությամբ և Ռիմանյան v_g ծավալով: Ենթադրենք, որ Ռիչի կորությունը ներքևից սահմանափակ է ամեն $\mathcal{B}_r(x_0)$ գնդի վրա: Դիցուք μ -ն այնպիսի Բորելի չափ է \mathcal{M} -ի վրա, որ $d\mu(x) = \mu(x)dv_g(x)$ որևէ $\mu \in L^\infty(\mathcal{M}, v_g)$ -ի համար: Այդ դեպքում յուրաքանչյուր $x_0 \in \mathcal{M}$ կետում մետրիկական չափային (\mathcal{M}, d, μ) տարածությունը թույլ է տալիս բևեռային վերլուծություն Եկատառում 1-ում տրված տեսքով:*

Եկատառում 6 *Ռիչի կորությունը գլոբալ սահմանափակ է սահմանափակ երկրաչափությամբ Ռիմանյան բազմաձևությունների վրա, ինչպիսիք են կոմպակտ բազմաձևություններն ու համասեռ տարածությունները: Ընդհանրապես, ըստ Չովֆ-Ռիևովի թեորեմի, Ռիմանյան լրիվ բազմաձևության բոլոր գնդերը հարաբերական կոմպակտ են, և այդպիսով Ռիչի կորությունն ինքնըստինքյան սահմանափակ է ամեն $\mathcal{B}_r(x_0)$ -ի վրա: Այս փաստի շնորհիվ Չետևանք 2-ի կիրառումը Ռիմանյան լրիվ բազմաձևություններում միանգամայն պարզ է:*

Լշենք, որ իրենց բնական ծավալային չափի հետ դիտարկվող Ռիմանյան լրիվ բազմաձևությունների համար գոյություն ունեն ավելի երկրաչափական և բացահայտ բևեռային վերլուծություններ: Տես, օրինակ, [Chavo6]-ի Պնդում III.3.1-ը:

Ինվարիանտ Ենթառիմանյան կառուցվածքներ Լիի խմբերի վրա

Դիցուք G -ն կապակցված իրական Լիի խումբ է՝ կահավորված ձախ ինվարիանտ Ենթառիմանյան $(G, \mathcal{D}, \langle \cdot, \cdot \rangle)$ կառուցվածքով և համապատասխան Կարնո-Կարաթեոդորիի d մետրիկայով [ABB19]: Պարզ է, որ (G, d) -ն որպես մետրիկական տարածություն լրիվ է ([ABB19]-ի Չետևանք 7.51), ուստի, ըստ [ABB19]-ի Պնդում 3.47-ի, բոլոր $\mathcal{B}_r(x_0)$ գնդերը հարաբերական կոմպակտ են և այդպիսով ունեն վերջավոր $\mu(\mathcal{B}_r(x_0)) < \infty$ չափ Բորելի ցանկացած լոկալ վերջավոր μ չափի պարագայում: Մյուս կողմից՝ G -ի σ -կոմպատկությունը նույնպես պարզ է, և Չետևանք 1-ի օգնությամբ կարող ենք հաստատել բևեռային վերլուծության գոյությունը ցանկացած $x_0 \in G$ կետում:

Սակայն այն հարցը, թե արդյոք ν_{x_0} չափը բացարձակ անընդհատ է, ըստ ամենայնի այսօր մնում է բաց:

Հայտարարություն

Ֆինանսական աջակցություն

Այս աշխատանքը կատարվել է FWO Odysseus 1 ծրագրի G.0H94.18N: Analysis and Partial Differential Equations գրանտի և Գեներալ Համալսարանի Հատուկ Հետազոտությունների Ֆոնդի (BOF) Methusalem ծրագրի ներքո (գրանտի համար՝ 01M01021): Մ.Ռ.-ն նաև ստացել է EPSRC EP/R003025/2 և EP/V005529/1 գրանտերի աջակցությունը:

Շահերի հնարավոր բախման բացահայտում

Կիրառելի չէ

Համապատասխանություն էթիկայի նորմերին

Կիրառելի չէ

Տվյալների հասանելիության հայտարարություն

Կիրառելի չէ

Կոդի հասանելիությունը

Կիրառելի չէ

Գրականություն

[ABB19] A. Agrachev, D. Barilari, U. Boscain. *A comprehensive introduction to sub-Riemannian geometry* Cambridge University Press, 2019.

[Bog07.I] V. Bogachev. *Measure Theory*, vol. I Springer, 2007.

[Bog07.II] V. Bogachev. *Measure Theory*, vol II Springer, 2007.

[Chav06] I. Chavel. *Riemannian geometry: a modern introduction* Cambridge University Press, 2006.

[Gra04] A. Gray. *Tubes* Birkhäuser, 2004.

[Fol99] G. Folland. *Real analysis. Modern techniques and their applications..* John Wiley&Sons, Inc., 1999.

[Fre01] D. Fremlin. *Measure Theory*, vol. 2 Biddles Short Run Books, King's Lynn, 2001.

[Fre02] D. Fremlin. *Measure Theory*, vol. 3 Biddles Short Run Books, King's Lynn, 2002.

[Fre03] D. Fremlin. *Measure Theory*, vol. 4 Biddles Short Run Books, King's Lynn, 2003.

[RuVe19] M. Ruzhansky, D. Verma. Hardy inequalities on metric measure spaces. *Proc. R. Soc. A* 475:20180310, 2019.

[Skr19] M. Skriyanov. Bounds for L_p -Discrepancies of Point Distributions in Compact Metric Measure Spaces. *Constructive Approximation* 51:413-425, 2019.

[Sto48] A. Stone. Paracompactness and product spaces. *Bull. Amer. Math. Soc.* 54(10):977-982, 1948.